Արքայութիւն ըսածը ,  
Չեռք ձեռքի տանք ու երթանք .  
Տեսնենք հայրիկըս և Աստուածը :

ՅԱԿՈՒՅ Մ ՈՒՃՈՒԵԱՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆ

( Ն Ի Շ Ե Ր )

Որոնց որ հանդիպիմ՝ կգովեն երկրագործութիւնը : Ա-  
մէնքն ալ համաձայն են այդ արհեստին հաճոյքներուն ,

լաւութեանը և օգտակարութեան մասին : Ո՛չ ոք չհարցներ թէ արդեօք երկրագործութիւնը գ ո Ր ծ ն ա կ ա՞ն արհեստ է թէ ոչ : Եւ ուստի ոչ ոք փափաք կտած է այդ արհեստը վեր սունելու : Սակայն ամէն ուրիշ արհեստներու նման երկրագործութիւնն ալ իր տեղը ունի ազգերու քաղաքակրթութեան ազդակներուն շարքին մէջ :

Հին ազգերու պատմութեան էջերը մեծաբարբառ կաղաղակեն թէ այդ ազգերուն ամենէն ճոխ ու փարթամ օրերը գուզընթաց կընթանային իրենց երկրագործութեան կատարելութեան : Բարելոն և Նինուէ ա՛յն ատեն ամենէն բարգաւաճ էին՝ երբ իրենց Միջագետեան արտերը ոռոգումով ու ուշիմ մշակումով եկած հասած էին բարբերութեան այնքան բարձր կէտ մը, որ վեցհարիւրապատիկ հունձք կուտային : Եգիպտոս այն ատեն մնայուն և հիմնական քաղաքակրթութիւն մը յառաջ բերաւ՝ երբ Նեղոսը իրեն օժանդակ առնելով՝ դարձաւ աշխարհի արմտիքի ամբարը : Ու այս և այսօրինակ քաղաքակրթութիւններու ընդ մէջ երթեկող գործակալները՝ Փիւնիկեցիներն ու Յոյները՝ իրենց յառաջդիմութիւնը այդ երկիրներէն ստացան : Հետզհետէ ծագող Պարթևական, Պարսիկ, Մակեդոնիան, Հռոմեան և Մահմետական քաղաքակրթութիւնները ջանացին իրենց փառքը հիմնել այդ վաղեմի ցեղերէն ժառանգ մնացած ատաղձներով, ուստի և շուտով շիջեցան ու անցան :

Այսօր ալ ամենէն յարատև և յարածուն ազգերը անոնք են որոնք իրենց երկրագործութիւնը յառաջադէմ կ'պահեն : Ռուսիա, Գերմանիա, Տանիմարքա, Գաղղիա, Նոյն իսկ Հնդկաստան, Չինաստան եւ Ճափօն, իրենց բոլոր յաջողութեան և ամրութեան ուժը այդ արհեստին կ'պարտին : Անգլիա միւս կողմէ, կաշկանդուած աւատական կարգուսարքի բեկորներով՝ իր գոյութեան միակ թիկունք ունի իր բեղուն գաղութները՝ մինչ Մ. Նահանգներն ամենէն աւելի բացայայտ ցուցանիչն են երկրագործութեան նշա-

Նակութիւնը լուսաբանող՝ ազգերու յառաջացման գործին մէջ :

Նմանապէս՝ սա կիսամեռ թուրք պետութիւնն ալ արեգակի նման պայծառ փաստ մըն է նոյն այս սկզբունքին : Զարդել եւ հայածել երկրագործ դասը (հայերը) ու գանոնք խճողել վաշխատուններով (մուհաճիր) որոնց պաշտօնն ու բնագոյր լոկ ալան-թալանն է երկրագործին ինչքերուն . այս հզօր քայլերով Թուրքիա եկած է այնպիսի կէտի մը ուր նա ծղւնը կդնէ փոքրիկ Սեւ-Լեռին , կվախնայ ափ մը հայութենէն , կդղրդայ արաբ հրաներէն ու ինքզինքը մահուան խիստ մօտ կըզգայ :

Հարեանցի տեսանք թէ երկրագործութիւնը՝ այդ հողի ու աղբի արհեստը՝ որքան հեռուները ազդած է : Կմնայ հարցնել «Ինչո՞ւ»-ն :

Երկրագործութիւնը մինչ մէկ կողմէն տնտեսապէս կը սնուցանէ ազգերը՝ զանոնք օտարներէ դրամապէս անկախ պահելով, միւս կողմէ խնայող ազդակ մը կդառնայ ազգերու անհատներուն ուժին և կարողութեանը : Պարզ դիտողն արդէն գիտէ թէ մարդկային անհատը իր անձնական ձիրքերուն ամենէն ճոխ պաշարն ունի երբ գիւղին ու դաշտին մէջ կապրի : Հետզհետէ յարաբերելով քաղաքներու հետ և հուսկ հոն փոխադրուելով նա կկորսնցնէ իր բնածիր ընդունակութիւնները ու փոխարէն կըստանայ ար ու ե ս տ ա կ ա ն միջոցներ իր պէտքերը , պարտքերը ու հաճոյքները դոհացնելու , եւ երբ ազդային մեծ առիթ մը ու պէտք մը ներկայանայ՝ մարդն անկարող կըզգայ ինքզինքը իր շրջանակին մէջ գործելու : Ազգերը չեն փրկուիր գէնքերով , գործատուներով կամ շէնքերով , այլ ընդհակառակն առաքինութեամբ , զգացումով և մեծագործութեամբ : Ազգերու ճակատագիրն առհասարակ կապուած է քաղաքական անցքերու հետ և միշտ այն կողմըն է յաղթողը որուն մեծագոյն թիւը բաց դաշտերէն եկած է : Կիւրոսէն սկսեալ մինչև Հրէից Դաւիթն , անցեալ

դարու Կարիպալտին, Վաշինկթոնն ու մեր հայ մարտիկները ո՞չ ապաքէն մեծ մասամբ շինականներ եղած են: Պալքաններու երէկի պատերազմը թուրքին դէմ նոյնը կմեկնաբանէ:

Երկրագործը (ևս և շինականը) աւելի մօտ է Բնութեան կամ Աստուծոյ և աւելի լայնօրէն կը զգայ ու կխորհի: Հազարումէկ պայմանադրականութիւններ ու նոյնիսկ «ծաղիկներ» չեն դիզւիր իր վրան ու չեն գինքը արգելեր հետեւելու բնատուր հակումներու:

Ո՛չ միայն երկրագործը աւելի անխաթար է իր ձիրքերով՝ գործելու, մեծագործելու և սանդագործելու, քան իր գաղթենի եղբայրը՝ այլև իր աշխարհային ինչքերը այն տեսակ ձևի տակ են որ նա աւելի եռանդուն հսկելու պէտք ունի անոնց վրա: Իր արտերը, տունը, անդեան ու ընտանիքը՝ քաղաքական յարձակումներու ամենէն շատ ու յաճախ ենթակայ են, ուստի և հարկ է որ նա լաւ գինուոր ըլլայ: Քաղքենին սակայն չունի այդ դժբախտութիւնը՝ վասնզի մինչ դաշտերն ու գիւղերը արշաւով ու թայանով տէրեր կփոխեն, քաղաքներն պաշարուելով կամ անձնատուութեամբ կամ դաշնագրութեամբ ձեռքէ ձեռք կանցնին՝ ու իրենց ներքին կեանքը գրեթէ միշտ անխափան կշարունակուի լոկ դրօշի մը փոփոխմամբ:

Այլևս ինչո՞ւ հարցնել թէ երկրագործութիւնը դ որ ծընակա՞ն արհեստ է: Եթէ ազգերու պատմութիւնը այդ արհեստին ճկոյթէն կախուած կրսփայ՝ հարցը ինքնին աւելորդ կդառնայ:

S. Ե. ՍԻՐԱՄԱՐԳ

## ՈՂԲ ԲԱՆՏԻՆ

Քանի աւաղ կանցնի օրերս բանտերու մի խոր անկիւն ,  
Գիշեր ցերեկ միշտ կարտասուեմ կուգայ աչքերէս արիւն ,  
Անցան երջանիկ օրերս ծաղրելով ձեզ ընդ փոյթ  
Ի խոր խոցեալ սիրտս ու ոգիս ինքեանք գացին զուարթ-  
թուն :

Եկ հէք մուգայդ զարկ քո կեթառն թէ կարես տալ մի ժը-  
պիտ ,  
Ապա թէ ոչ կարկես դու ևս մուտ ի մէջքս սենեկիդ ,  
Թող գայ բժիշկն պանդայէօն առնել վերացս դարման ինչ ,  
Գուցէ իւր ճարտարձարհեստին կարէ մեղմել խուռն մի խուռն :

Արի և դու Հոմերոյդ քերթոյ հանդերձ Մելտօփի գրչին ,  
Տալ սփոփանք սաստիկ ցաւոյս ամենաաքանչ տողի ,  
Ծանեալ էին քեզ ի քո դարոյդ ամէն իրաց դարման դեղ ,  
Եւ դու անդուլ անձնանուէր գործ էիր միշտ օրն ի բուն :

Այժմ եկ տես քանի Հոմերք կը կրեն վիշտ տառապանք ,  
Անմեղ սրտից խոր անկիւններն խեղախրխրուք հառաչանք ,  
Ոյք գատեալ են կենաց ընչից ոյք անջատեալ վառ սիրով :  
Ժոյժկալելով վասն փրկչէն կուսանքն իմաստուն :

Թէ չելանէր անմեղն Յիսուս իւր փրկչական ի խաչին ,  
Վայ լըքելոցս պիտ հեծեծենք մինչ ցյաւիտեան բանտին  
Փառք գոհութիւն Աստուած որդոյն մեզ սփոփանք  
Հարթելով մեզ ճանապարհ կենաց ետ մեզ պարզեն ան-  
հուն :

ՓՈՒՔԻ ԶԱՅՕԱՄՏԱՆԻ

## ՔԱՐԻ ԿՏՈՐԸ

Օր մը քարի կտոր մը ցոյց կուտան քեզի. հատորի մը դեղնած՝ մաշած բեկորն է: Ակնարկ մը կուտաս և աչքդ մէկդի կը դարձնես. փողոցները ասոնցմէ շա՛տ: Եւ ահա կ'ըսեն քեզի թէ այդ քարին կտորը Անիին աւերակներէն բերուած է: Եւ դո՛ւն, հայ՝ յանկարծ կը ցնցուիս ամբողջ էութեանդ մէջ. ոտքիդ մատուըներէն գլխուդ մագերը սարսուռ մը կ'փղձկի, աչքերդ արցունքով կը լեցուին, կարօտակէց սիրով կը համբուրես քարը, ու չես կշտանար: Եւ սակայն ըսպէ՛ մը առաջ գայն արհամարհած էիր. բառ մը հնչեցին ականջիդ, ու այդ անգեղեայ նիւթը հոգի առաւ, հոգիիդ միացաւ ու գեղեցկագոյն գեղեցկութեան մը փայլովը կը զմայլեցնէ քեզ: Դուն քեզի հարցուր. «ինչո՞ւ»

Գիտունները ընդունած են թէ բան չի փճանար ըրնութեան մէջ: Ամէն ինչ կը տարբադադրի, կայլափոխի. հիւլէները ձգողական զօրութեամբ իրար կը քալեն, նոր մարմիններ կը ստեղծուին: Չեն կորսուիր ուրեմն արցունքներն ալ, անմահ կը մնան ուրեմն արիւնի կաթիլներն ալ: Այդ քարին խեցին քու ցեղիդ մեծութիւնը տեսած է, անոր ցնծութեան արցունքելը իր վրան ալ թափուած են, քու թագաւորներուդ փառքին վկան է եղած, և հայուն ուրախութեան երգերուն ձայնի ալիքները իր վրան ալ հանգչեր են: Օր մըն ալ այդ ժողովուրդը տրտմութեան լացովը լացեր է, ու իր արցունքները այդ քարին վրայ ալ ինկած են. քու ցեղդ ջարդուեր է, և իր արիւնէն այդ քարին վրայ ալ ժայթքեր: Բան մը չփճանար ընութեան մէջ. արցունք, արիւն՝ անոնք ալ չեն անէացած. իրարու պըլլուած կը հանգչին այդ քարին մէջ: Քու ցեղիդ արիւնն է ատիկա: այդ արիւնովը դուն հայ ես. առանց արիւնի ժառանգութեան չի կա ցեղ:

ԵՆՈՐ ԿԵԱՆՔՈՒՆ

## ԹՈՒՐԻՔ ՊԱՇՏՕՆԵԱՆ

Տարիներ առաջ Ձէյթունի շրջակայ գիւղերէն թուրք պաշտօնեայ մը գէյթունցիի մը տուն երթալով հիւր կըլլայ, տան էրիք մարդը բացակայ ըլլալուն տան տիկինը սովորական յարգանքով՝ գայն կը հիւրընկալէ, և բանջարեղէնով եփուած կերակուր մը բերելով հիւրին կը հրամցնէ. պաշտօնեան բարկացած եղանակով մը՝ միթէ ես է՞ջ եմ, որ ինծի բանջարեղէն կը հրամցնես, ըսելով՝ ամանը մէկ կողմ կնետէ. տիկինը դողդողուն ձեռքով կերակուրը կառնէ և սենեակէն դուրս կելլէ, ճիշտ այդ պահուն տան տէրը տուն էր հասած, որ կը տեղեկանայ անցածը. այս ամենուն տեղեկանալէն վերջը անոր մտեղէն կերակուրը իմ վեցհարուածեանիս բերանն է ըսելով, իր գինուած տարագով ներս կը մտնէ և կը կանչէ կնիկ, աղային կերակուր բե՛ր, կինը միևնոյն կերակուրը ներս կը բերէ, այս պահուն թուրքը Ձէյթունցիին գէնքերու սարսափէն յափըշտակուած ցած ձայնով՝ այս կերակուրին Պօլսոյ մէջ «սէպսէ պաստըսի» կըսեն ըսելով պնակը առաջը կը քաշէ, իսկ կինը մէկ անկիւն քաշուելով. --

Շուն շան որդի քիչ մը առաջ ես է՞ջ եմ, այս կերակուրը կուտուի՞ կըսէիր, ըսելով կը մրմռայ :

## ԱՐՁԱԳԱՆԳԻ ԱՇԽԱՐՀԷՆ

### I

Ո՞վ կը յայտնէ նաւապետին ներկայութիւնն ժայռի մի բարբարոս  
— Մի բար՛ փարոս :

Որ անձը արժանի է կոչուիլ փարեւի  
 — Բարեյի :  
 Ո՞ր մարդիկ շատ անգամներ կը կարծուին բարեսէր  
 — Փառասէր :  
 Ինչպէ՞ս վարուիմ երբ դէմս ելլէ մի ելուզակ  
 — Եւ ու զարկ :  
 Որո՞ւ օգուտ ունին խորհրդածուծիւններն առանձին  
 — Առանձին :  
 Ի՞նչ կըսես երբ թէյը թափեն առաստակէ  
 Առ աս տաք է :  
 Ի՞նչ տայ մայրը տղուն երբ հագուստն է բեր արատ  
 — Բեր առատ :  
 Ինչպէ՞ս պէտք է ըլլալ երբ կը լեցնեն արդուն  
 — Արթուն :  
 Ինչ անուն տալ ճաշակաւոր հանելուկաց բառախաղից բա-  
 րեգարդ  
 — Բառէ զարդ :  
 Բնազդաբար ի՞նչ ձայն հանես երբ տեսնես պալած մ'ե-  
 ղած բուհ  
 — Բուհ :  
 Ի՞նչ կը բացականչէ կինը երբ կը ծակի տան բուխերիկ  
 — Բուխ էրիկ :  
 Ի՞նչ է որ յաճախ կը տեսնենք ի ամարանոց  
 — Ամրան օձ :  
 Ի՞նչ բան կընէ մարդուն սիրտն ու դէմքը փոթ փոթ  
 — Բօթ :  
 Ընդունե՞մ երբ տան ինձ մի թանկագին գոհար  
 — Գոհ առ :  
 Ո՞վ հողագործ , ի՞նչ շատցնէ քուկին պանիր ու քու թան  
 — Գութան :  
 Ժխտականը գիտե՞ս բառին գոչեմ  
 — Գոյ շեմ :

Գիտե՞ս այսօր ինչո՞ւ քեզի կգողեմ — Զի քու քով եմ :

Ո՞ր ժամանակն է որ կըսենք չէ կորսուած — Գործուած :

Ի՞նչ բան կը զօրացնէ կամքի կորով — Գորով :

Զիաւորը ու խեղճ տղայ ո՞վ գարկաւ գուձիդ — Քու ձիդ :

Հակառակորդը .— Ինչ պատճառեց մեր մէջ այս գուպար — Քու պար

Ո՞վ տայ էն մահացու թոյնը հայոց — Հայ օձ :

Ո՞ր ընկճուածը դադրի բռնութեան դէմ ընելէ գանգատ — Գանգատ :

Ո՞վ առ հասարակ կնկատուի անպարսաւ — Ան որ համբարձաւ (Յիսուս) :

Ի՞նչ տխրոս տաս մարդու մ'որ լեցուն է հանճարով ա- նոլորտ — Ան է լորտ :

Բարեպաշտ որչափ փառք տայ երբ կը գտնէ մեղրի աղ- բիւր — Ահ բիւր :

Ի՞նչ բացականչէ կիրթ խօսողը երբ կը լսէ բառեր աղա- լաղ — Ա՛խ, աւա՛ղ :

Ի՞նչ ընէ երիտասարդը երբ տեսնէ մի Օրիորդ համեստ գերթ աղանի — Ա՛հ, հաւնի :

Ո՞ր բառեր շատ գործածես երբ կը գովես մի մաղդ ան- գանի : Ան ու անի :

- Քնկեր աւագակը — Ինչ ընեմ երբ հանդիպիմ ձիու մ'ա-  
ռանձին  
— Առ ան ձին :
- Տաղ—Գրողը իր երգին արժանիքը որ բարձրացնէ, փոխա-  
նակ ըսելու թէ
- Յարմար է առ աս տաղը  
— Առաստաղը :
- Յաճախ ինչպէ՞ս կըլլան մարդիկ դիւրադատ  
— Թիւրադատ :

II

ՀԱՆԵԼՈՒԿ ՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

- 1            Հայ պատմութեան մէջ կը փայլի,  
վսեմաշուք մի ազնիւ անձ,  
Որ իր ջանքով անդադրելի  
Թողուց ազգին մի անգին գանձ՝  
Անոր գործերն մեզ կը խօսին,  
Արժանի է մեծ տիտղոսին,  
Պապն էր խոնարհ ժիր և արթուն,  
Նոյնպէս և ինք ու մարթուն  
վսեմ տիպար մը հայ մարդուն,  
Անուանել զինք կրնա՞ս արդ զուն :
- 2            Թէ պատմածէս լաւ չես յիշեր  
Հաճիր գտնել չորս հայ բառեր -  
Որ կցուելով թող արտադրեն  
Անուն և ազգանուն իրեն :  
Մին գործածեն մեծ ու պզտիկ,  
Միւսն վաճառականք բեռնակիրք,

Իսկ երրորդն է խայտանք գուարթ  
Սիրուող կեանք է երիտասարդ ,  
Չորրորդն ունին կին և մարդ ,  
Պատասխանը կուտա՞ս դու արդ :

\* \* \*

### III

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ը

(Տողերուն առաջին գիրերը իրարու հետ միացած պատասխանը  
կարտադրեն)

Սուրբ սիրով վառուած այր մ'էր շնորհալի ,  
Աստուածավախ հեց գործօն պաշտելի ,  
Հուր սփռեց սիրոյ և եղբայրութեան  
Ահագին գունդեր վասն փրկութեան .  
Կազմեց ու կրթեց ուղարկեց չորս դին  
Պատգամներ տալու հայ ժողովուրդին  
Անոնց միտքերուն տալ ճաճանչ լոյսի  
Բենական քաղցրիկ մշտական յոյսի  
Թղթերով անթիւ տուաւ հոգւոյն թիւ  
Եւ սլացք դէպ վեր Սուրբ Սահակ Պարթև :

Ա.Ա.

## ԵԳԻՊՏՈՍԸ ԵՒ ԵԳԻՊՏԱՅԻՆ

Երբոր գաղթէք ուրիշ երկրէ մը եգիպտոս,  
Տարօրինակ կը գտնէք ամէն բան հոս,

Մի զարմանաք Արաբերէն լեզուին  
Դիւրին է թէ դժւար, մարդիկ շատ կը սորվին:

Ամենէն առաջ փնաս չունի որ ըսել է մալէշ,  
Պէտք է սորվի մարդ որպէսզի չըլլայ «էշ»  
Ձարմանալի բան հացին ալ կըսեն էշ  
Լեզու մը ահա պէտք է սորվի աղէկ կամ գէշ:

Իսկ գալով իշուն կըսեն «խումար»  
Դրամ խաղալ կըսեն տանկերէն խումար  
Դրամ խաղալ արաբերէն կըսեն ումար  
Այս բառերով ստանաս կըլլայ յարմար:

Սովորութիւն ունին գործածել հաշիշ,  
Երբեմն ալ կուզեն դրամ պախշիշ  
Տուլ կուտեն քիչով կը գոհանան,  
Գիշեր ցերեկ էշու պէս կը քնանան:

Աղեքսանդրիա ամառը տաք խոնաւ կլիման  
Ձմեռը վատառողջ այս քաղաքը լիման  
Բայց քաղաքը շտկուած գեղեցիկ  
Ճամբաները շիտակ մաքուր գոհ են տեղացիք:

Արաքներէն շատեր չեն տեսներ քէօր Փէլլահ  
Միշտ կը գործածեն Աստուած բառը Ալլահ,  
Աղեքսանդրիան ունի աղի լիճը մեծ միլլահ  
Վատառողջ կլիմային բուն իսկ պատճառը ահա:

Եգիպտոսին մէջէն կանցնի գետը մեծ Նեղոս ,  
Ունի առատ բոյսեր և կենդանին կոկորդիլոս .  
Բամբակ բուսնի շաքարեղէգ և մըսըր ,  
Մինչև հասնիս քաղաքն մեծ Մըսըր :

Աղեքսանդրիայէն Երկաթուղին կը սուրայ  
Շատ չ'քշեր շուտով կը հասնիս Մանսուրայ  
Ուրիչ կայարաններ ալ և «Թանգայ»  
Մինչև Գահիրէ սիրտդ տեղէն կը թնդայ :

Գահիրէ մայրաքաղաք Եգիպտոսի ,  
Այն տեղ «Նիլը» առատ կը հոսի ,  
Սփինքս արմաւենի կը տեսնես և բերամիտ  
Հոս գալերնուս պատճառ եղար ով Համիտ :

ՎՐԴԱՆԷՍ ԵՐԱՄԵԱՆ

Ջանք թատերախմբի անդամներէն  
ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱ

---

## ԵՐԿՈՒ ՃԱՐՊԻԿ ԳՈՂԵՐ

---

Երկու գողեր խօսք մէկ ըրին ,  
Լաթերնին շատ լաւ փոխեցին ,  
Մին սարկաւազ միւսը տէրտէր ,  
Մին կը կարդար միւսը կերգէր :  
Օր ցորեկով գացին մըտան ,  
Կընկան մը տուն . երկու բերան ,  
Կրնա՞նք կարդալ Աւետարան :

Կարդա Տէր հայր կարգիդ դուրպան .  
Կրնաս ըսել ալ շարական ,  
Սակայն այս էր զարմանալին  
Կարդալ գրել չգիտէին :  
Ճարպիկութեամբ անոնցմէ մին ,  
Այսպէս կարդար ձայնով ուժգին .  
«Չոր միս շարուած է չուանէն  
Չոր միս կախուած է ձողերէն  
Շուտով կախէ փէշերուդ տակ  
Ես լեցնեմ մաղէ տոպրակ» :  
Ասոր միւսն ալ պատասխանէր .  
«Տեղը բարձր է չատ , ընկե՛ր ,  
Ի՞նչ լաւ փերթեր ինչ ալ Եղլի  
Երգենք թերևս յար գտնուի :  
Կինը կեցած հոն միայնակ ,  
Լսէր նոր ձայն նոր եղանակ .  
Ապշած վազեց դուրս որ կանչէ ,  
Գուռ դրացի տունը ժողվէ :  
Դրացիներ շուտով եկան  
Սակայն տան մէջ ոչ ոք գտան ,  
Ոչ սարկաւազ ոչ ալ տէրտէր ,  
Յայտնի ալ չէր անոնց հետքեր :  
Կինը չորս կողմ ի զուր նայէր ,  
Անոնք մէկտեղ էին տարեր  
Իր ապուխտի բոլոր փերթեր :  
Էին գողեր ոչ թէ տէրտէր :  
Այսպէս անթիւ շարագործներ  
Ժպտին ըլլան քարոզիչներ :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՐԻԿԵԱՆ  
Սերաստացի

## ՄԱՆՈՒԿԸ

1. Մանուկն է այն անուշ, անմեղ անժպիտ,  
Օրօրանին ճռոցին հետ երերուն,  
Որ մերթ ճշայ, մերթ հառաչով մը իր սիրտ,  
Հանգչիլ տենչայ մօր մը զուարթ գրկերուն:
2. Արտասուածք որ աչերն անոր գեղանի,  
Մորմոքի մը խօլ համբոյրէն այրուած,  
Շողին, կաթին շիթերն անմեղ տրտունջի,  
Մինչ մայրն երգէ մեղեդիներ օրհնապանծ:
3. Օրօր գառնուկ իմ սղաւնիս սիրական,  
Պաճիկ ըրէ շղարշիդ տակ ոսկեթեւ,  
Փոխան լացիդ ժպիտ մը տուր մայրիկան,  
Որով կրնաս մօրդ յոյսերն պսակել:
4. Օրօրներու քաղցրահնչիւն ձայնն աղու,  
Ի գո՛ւր հնչեն հեգ մանկանը ականջին,  
Ո՛չ կը նայի ո՛չ կը լսէ երգերու,  
Անոր ողբը կաթին ողբն է, ո՛չ կաթին:
5. Ահա այդպէս կան ազգեր ալ հեղձաշունչ,  
Կը փայփայունին յոյսի ոսկի պսակով,  
Բայց դժբաղդ է այն ազգը որ լուռ ու մունջ,  
Միշտ կը խաբուի առանց կաթի, օրօրով:

Կ. ՄՈՒՌՆԱՆՑԻ

## ՀԱՄԱՇԻՍՐՀԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

### I

Ձմեռուան հանդէպ մ'ունենաք գանգատ  
Ըսելով «ցուրտ է շատ»  
Օր մըն ալ կուգայ սիրելի գարուն  
Հետն ալ կանաչութիւն :

Ձառիվերէն ետք կուգայ զառիվար  
Մարդիկ թող գիտնան յար ,  
Դժուար գործեր միշտ կ'ըլլան դիւրին  
Երբ կայ համբերութիւն :

Սա բնական բան մ'է աշխարհի մէջ ,  
Կը փոխուի միշտ կեանքի էջ .  
Այս գրիչը մերթ կը պատմէ , ա'հ , մեր  
Խինդեր , մերթ ալ վիշտեր :

Պառնափնդոր է կարժը չ'ըսէք յար ,  
Ձի այդպէս չի մնար .  
Տեսած էք գիշեր մը որ առաւօտ  
Ունեցած չէ իր մօտ :  
Շատ բարձրանայ կ'ուզէ բարեկամք ,  
Մարդուս մէջ սա կամք .

Ներկայէս ըլլալ գոհ ինձ համար ,  
Է հաճելի յարմար :

## ԵՐԻՏԱՍԱՐԴԵ

### II

Աչքիս լոյսը, աղջիկ մ'առնել դուն կ'ուզես,  
Խօսքը լսե՛ շատ օգտակար կ'ըլլայ քեզ,  
Հայրն ու մայրը տալ կ'ուզեն բայց դուն նորէն,  
Հարց ու փորձէ որ չը տուժես (տխրօրէն):

Աղջիկն եթէ «պսակուիլ չեմ ուզեր ես  
«Անոր հետը» ըսած է. դո՛ւն ալ կ'ըսես  
Նոյնն անոր քով, զի սէրէ գուրկ կին չ'ըլլար,  
Ան ըլլայ իսկ, կը կենակցիս դառնաբար:

Կը փնտռտէ տրտնջալու միշտ առիթ,  
Տալով քնաս ստացուածքիդ ու կեանքիդ:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԷԻՆ

### III

Ա՛յ գեղանի աղջիկ, ո՞վ է այդ հետն որուն,  
Կը պտտես, ետ կեցիր զի լեզու կ'իյնաս դուն,  
Սանտրուած ու դարդարուած կ'երևի քեզ վառ,  
Կրնա՞յ վարուիլ ապագային՝ նկատի առ:

«Վախնամ դուն ալ վաստըկէ—պիտ ըսէ, և կամ,—  
«Իուն աշխատէ իսկ ես ալ հանգիստ կ'ուտեմ միայն...»

Եթէ այսպէս է, մի քաւեր ետ եկուր մէկ քայլ,  
Այդ տեսակ մարդ կենակից չի կրնար ըլլալ: ..

Ծնողքիդ դուն ըսէ անոնք թող փնտռտեն,  
Եթէ յարմար սեպեն տուր ձեռքդ այն ատեն:

—

### III

Կուզես որ գաւակդ ըլլայ լաւ, դո՛ւն,  
Մի՛ քաւեր մէջէն ագեղ ճամբուն.  
Մ'ըսեր մանուկ է, ի՛նչ գիտէ... այն,  
Օրրանէն կ'առնէ ուսում սակայն:

Դո՛ւն ինչ որ ունիս չես ալ ունիմ՝  
Պիտ ըսէ ան... խօսքերուն իմ  
Չ'ըլլայ թէ ըսես, փուճ, պարապ բան,  
Լա՛ւ եղիր որ լաւ ըլլայ ան:

Դպրոցն է օրրան, ուրկէ պարտին  
Ծնողներ կրթել իրենց որդին:

—

## Ա Ն Խ Ե Լ Ք Ը

### V

Դարձուր աչերդ ունայէ մէկ մ'եղբայր,  
Ինչ կ'ընէ դէմի այդ մարդը տիմար.  
Չը սիրած մարդուն կուտայ աղջիկն ան,  
Պիտ անպատուէ գայն մահուան չաստիճան:

Բանութեամբ երբէք կենակից չ'ըլլար .  
Մինքնկըլլայ սև փուշ, միւսն ալ գլխու քար .  
Սէրէ գուրկ աղջիկն սատանին ճամբան  
Կ'երթայ, արատ կը բերէ իր անուան :  
Կեանքը չը ծախէք արծաթի փոխան  
Պարտիզպանի պէս ծախող պատինճան :

Թրդ . Թուրք .

ՎԱՀԱՆ ԶՈՒԳԱՍԸԶԵԱՆ

---

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՏԵԱՐ ԵՐՈՒԱՆԴ ԾԱԿՈՐԵԱՆԻ

---

Կարդացի՛լտասներեքերորդ Միութիւն թերթին մէջ ,  
Ն . Վ . Պօղոս փաշա Նուպարի գրութիւնդ մի էջ :  
Սրտով մաքուր , լեզուով անուշ ի՞նչ դեղեցիկ թռչուն մ'ես  
Հայրենիքս անձէս աւելի կը սիրեմ անոր կըսես :  
Սիրելի Հայրիկ քու անունըդ պիտի յիշուի դարէ դար ,  
Սասունցիք և Տալւորիկցիք կը մտածես անդադար :

Ան որ անգութ հարուստ մըն է պէտք է առնէ քեզմէ  
դաս ,  
Կըսես անոր պարապ եկար ամօթ է պարապ երթաս :  
Դասն և Հինգ Հազար Փրանքէ պզտիկ գումար համարես  
դուն  
Բոլոր գիւղացիներ մէկտեղ կաղօթենք ապրիս սիրուն :  
Սիրելի Հայրիկ քու անունդ պիտի յիշուի դարէ դար ,  
Սասունցիք և Տալւորիկցիք կը մտածես անդադար :

Մեծ գումար մըն ալ վերջը ձօնել կը խոստանաս ունիս  
յոյս

ի՛նչ փառաւոր, ինչ բախտաւոր առաջ կը փութայ քու  
լոյս :

Տատէր կըսէ գրութիւնդ երբ որ տեսնէ ամէն անձ,  
Անշուշտ գոչեն հազար ապրի Տեար Երուանդ Յակոբեանց :

---

Տեար Լևոն Մկրտիչեան նոյն թիւին մէջ այսպէս շեշտած էր, եթէ ամէն Հայ Հարուսա Տեար Ե. Յակոբեանի զգացումը եւ ըմբռնողութիւնը ունեցած ըլլար, այս ազգը պարզապէս հրաշքներ կրնար գործել :

Տ. Ե. Յակոբեան մին է այն Հայերէն, որոնք ըմբռնած են, թէ ազգին նիւթապէս օգնելը պարտականութիւն է և ոչ եբբէք շնորհ, կը մաղթենք, որ շատնան մեր մէջ Երուանդ Յակոբեանները, փոխանակ այն (ուղուրսըզներուն) որոնք ոսկին ոսկիին վրայ դիզել միայն գիտեն :

Եւ, ոչ իրենց ոչ ալ իրենց համայնքին ուէ օգուտ կը բերեն :

Ու, այսպիսի անձինքներ կարժեն արժանանալ Հայ պատմութեան էջերին : Այսու հարկ համարեցի զետեղել Հազար ու մէկ Մաղիկ գրքոյկիս մէջ :

Իբրև յիշատակ Տեար Ե. Յակոբեանի՝ որպէսզի մեր մեծանուն Հայերը օրինակ առնեն .

---

## ԶՈՒԱՐԹ ԵՐԵՍ ԸԼԼԱԼ

---

Տիրուհի, թէ սիրտիդ մէջ ունենաս վիշտդ պէս պէս,  
Ջանա որ հիւրդ տեսնէ քեզ ուրախ զուարթ երես,  
Պահիկ մը մոռցիր հոգերդ խօսակցէ քաղաքավար,

Որ ըլլաս մերձակայից յարգելի և օգտակար :  
Վիշտերդ վռայիր , թաղէ մի յայտնէր մտերմիդ իսկ ,  
Մի գուցէ ծանալի ըլլաս հեռաւոր թշնամուդ ճիշտ ,  
Ձի քեզմէ լսող մարդիկ չեն պահեր այլոց կըսեն ,  
Անկատ ճշտութեան կը փոխեն կը խառնակեն :  
Բանն անցնի լեզուէ լեզու մինչև քեզ հասնի նորէն ,  
Տեսնես որ շատ բանսարկուք ներկեր են քեզ անօրէն ,  
Չես կրնար բիւրից լեզուն կաշկանդել գոնէ շտկել ,  
Քու լեզուիդ դիր կապ սահման մի պարծիր մի գանգատիր :

Թարգմ .

Ա . Մ . ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

Վեր . պատ . Էմիւրեանի կողմէ նոր հրատարակուելիք  
նօթագրուած յիսուսի մօտ երգերէն զրկուած է մեզ այս  
մեր գրքին մէջ դնելու համար , անոր եղանակը տեսնեք  
վերոյիշեալ պատուելիին կողմէ հրատարակուելիք երգա-  
րանին մէջ : ԾՆԹ . Ա . Ա .

## Երգ Հարսանեաց

ՊՍԱԿԷՆ ԱՌԱՋ

- 1 Բարեկամներ եղէք զուարթ ,  
Ուրախութեան ատեն է արդ .  
Այ մի կենաք լուին ու մունջ  
Թող բերաններ հանեն մրմունջ :

Օ՛ն ծափ զարնենք, պարենք երգենք  
Դէմքով, բերնով արտայայտենք,  
ւրախութիւն և ցնծութիւն,  
Քանզի այս է հարսանեաց տուն:

2 Եկեք դուք ալ ով պատանեակք  
Որ կը կոչուիք երգիչ խմբակ,  
Միացէք մեզ, ձայն վերցուցէք  
Լեցուն թափով գեղգեղեցէք:

Օն ծափ ևլն.

3 Նուագախումբն ալ թող գայ  
Եւ մեղի հետ ընկերանայ,  
Թող նուագեն տաւիղ, ջութակ  
Քնար, օրկան և գոռ դաշնակ:

Օն ծափ ևլն.

4 Զարնեն թմբուկ, դափ ու ծնծղայն,  
Հնչեցնեն սրինգ, տան ձայն,  
Փողեր պէսպէս նուագարան,  
Երկիր, գետին թող դղըրդան:

Օն ծափ ևլն

---

### ՊՍԱԿԷՆ ՎԵՐՋԸ

---

5 Յառաջ երթանք և ձեռք թոթուենք,  
Հարսն ու փեսան շնորհաւորենք.  
Քամենք կենաց անոյշ բաժակ  
Որ խսկապէս է օշարակ:

Օն ծափ ևլն.:

6  
Ձերմ փափաքով նոր ամուսին,  
Նորապսակ հարսն ու փեսին,  
Մաղթենք բարի վայելք, բերկրանք  
Երկար, յաջող երջանիկ կեանք:  
Օն ծափ էլն.:

7  
Ահա եկաւ շաքարի կարգ  
Ափսէն շրջի արագ արագ,  
Որ մեծ պատիկ, ժպտուն ձեռքով  
Բաժին առնեն իրենց ձեռքով:  
Օն ծափ էլն.:

8  
Այ ժամն հասաւ հրաժեշտին,  
Մեծ ու փոքր մեկնիլ պարտին.  
Մաղթանքներու զեղումներով  
Ամէնքս ըսենք «մնաք բարով:  
Օն ծափ էլն.:

Ս. Յ. ՔԶՆՏԻԿԵԱՆ

---

## Խ Ր Ա Տ Ն Ե Ր

---

Քեզի բաներ ըսեմ մտքիդ դնելու,  
Աշխատէ անունդ աղէկ հանելու:  
Մէկ քանի անգամ սխալներ լսուի,  
Շիտակ ալ խօսիս սուտ պիտի ըսուի:  
Մարմնիդ հանգստութիւն կուգես նէ եթէ,  
Գիշերն աղէկ կը քնանաս ցերեկն աշխատէ:  
Չըլլայ որ ցերեկն ալ քնանամ ըսես,

Բժիշկին ստակը կ'երթայ՝ դուն կը վնասես :  
 Հօրդ բարի խրատներու մտիկ չընես նէ տղայ ,  
 Փարա չըներ վերջը Խօսիս շատ մեղայ :  
 Հօրս խօսքը ինձի ոսկի էր կըսես ,  
 Չպահելուդ պատճառաւ շատ ձայն կը լսես :  
 Լսէ այս խօսքերըս միտքըդ լայն բաց  
 Ուրիշ մարդու ձեռքէ մի ընդունիր հաց .  
 Շիտակ մարդը շիտակ խօսքին չի ըսեր սուտ  
 Հանգիստ պառկիս աղքատութիւն կուգայ շուտ :  
 Այս տողերս գրած եմ ես առնողին ,  
 Շահ մը չունի շատ ալ խօսիմ չառնողին :  
 Բայց խօսք մը կայ խօսելու մինակ ,  
 Վերջէն գղջալու կուգայ ժամանակ :



### ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐ

- 1 Ի՞նչ է ան , որ առանց տերևի ճիւղ կուեննայ ,  
 Հողը տնկես կանհետի , ինչպէ՞ս կը մեծնայ :
- 2 Ո՞վ էր այն մարդը , ինչպէս մնաց ,  
 Մարմինը հողը չմտաւ հոգին ալ Աստծոյ չգնաց :
- 3 Ձուկ չէ ձուկի կը նմանի , հարցում մ'ընեմ գիտէ՞ք ան ,  
 Մէկ մեռելի նայելով մեռնելիքներ առողջացան :

\* \*

### ԱՆՆՈՆՁ ԿԻՆԸ

Այս տիկինը ազնիւ բարի ,  
 Համբաւ ունի նա իրաւի ,  
 Ժիր ու գործօն ամէն ատեն ,  
 Տուն տեղ պահէ մաքուր ու շէն :

Այրն է թէպէտ հիւանդ, անկար,  
ինքն է նեցուկ ու մխիթար.  
Սիրտովն ազնիւ, շեղուով անուշ,  
Պսակ ուխտին պահէ իր յուշ:

---

## ՇՈՒՆԸ ՄԱԾՈՒՆ ԿԸ ԼՁԷ

---

Վրանաբնակներէն երիտասարդ մը սիրահարին քով երթալով իր սրտի փափաքները յայտնել կուզէ, բայց խելացի աղջիկէն. «Չէ թէ ընտանեկան կապով մը կապուած, հապա դեռ նշանուած ալ չենք, կը խնդրեմ ասկէ հեռացիր, հիմա մայրս կարթննայ, առաջ Աստուծոյ և ապա մարդկութեան դիմէ, մաքուր անուննիս աւրելու չէ» խօսքերով կը մերժուի:

Ասոր վրայ երիտասարդը «Գիթա ինծի, դոնէ աչքերէդ մէյ մը համբուրեմ», ըսելով բազուկը աղջկան վիզը կը տանի: Ճիշդ այդ պահուն մայրը կարթննայ, «Աղջիկ այդ շափուր շուփուր ձայնը ի՞նչ է» ըսելով կը կանչէ. աղջիկը դողդոջուն ձայնով մը, «Մայրիկս, բան չի կայ, շուն մըն է, որ մածուն կը լցէ» ըսելով եղելութիւնը կը ծածկէ:

---

## ԻՆՉ ՈՐ ԸՍԵՍ ՆՈՅՆԸ ԿԸ ԼՍԵՍ

---

Երեք անխոհեմ մարդիկ ծեր մարդու մը հանդիպելով՝ անոնցմէ մին կըսէ «Ահա նոյ նահապետը», միւսը կը պատասխանէ, «Չէ, ան Հայր Աբրահամն է», իսկ երրորդը սրտմտօրէն դիտել կուտայ թէ ան ո՛չ նոյ նահապետն է և ոչ ալ Հայր Աբրահամը, այլ ասոր աչքերու արցունքներէն դատելով Յակոբ նահապետը ըլլալու է:

Մերոսնիին համբերութիւնը սպառելով խօսակիցները  
վընդմիջէ և կըսէ. «Կը սխալիք, պարոններ ես ձեր կար-  
ծածներէն ոչ մին եմ և ոչ միւսը, այլ Սաւուղն եմ ես, որ  
հոս դրկուկցայ հօրս կորսուած էջերը գտնելու համար :  
Արդ ուրախ եմ որ անոնցմէ երեքը գտայ հոս» :

---

### ԽԱՌԵՒԱՅ ԱՇԱԿԵՐՏ ՄԸ

---

Պատանի մը դերձակութիւն սորվիլ ուզելու առաջնա-  
կարգ դերձակի մը քով մտաւ և վարպետը ինչ որ կը հրա-  
մայէր իրեն կը կատարէր . հինգ տարի վերջը այս վար-  
պետին քովէն ելաւ և դիմեց ուրիշ դերձակի, որ հարցուց  
իբն . — արդէն դերձակութիւն ըրած ես, այո, պատաս-  
խանեց, այսինչ դերձակի քով հինգ տարի կեցած եմ, լաւ  
ուրեմն, այսօր մինչև իրիկուն աշխատէ, վաղը օրականդ  
կորոչեմ . այս միջոցին հարուստի մը ձեռք մը հանդերձը  
կարուած պատրաստ էր, արդուկելու համար տղայ Մար-  
կոս ըսաւ դերձակը, գործասեղանին մօտեցիր և սա ձեռք  
մը հանդերձը արդուկէ, արդուկը լաւ տաքցուր, բոլոր  
ուժովըդ չոքէ, ասոր տէրը կտապետ մըն է, եթէ աղէկ  
ընենք քանի մը դահեկան աւելի կառնենք» շատ աղէկ ը-  
սաւ աշակերտը, և արդուկը տաքցուց մինչև որ կարմրե-  
ցաւ, յետոյ տափատը, բաճկոնը և վերարկուն քով քովի  
փոց սեղանին վրայ և կարմրած արդուկը կպտուցնէր բոլոր  
ուժովը չոքելով . 1-2 վայրկեան չտեւեց սեղանէն բարձրա-  
ցող մուխը սենեակը լեցուց, վարպետը՝ որ մանկարդ Օր-  
ի մը չափը կառնէր հազիւ թէ մուխին հոսը առաւ և տղայ  
Մարկոս այս ի՞նչ մուխ է, հրդե՞հ կայ, պոռաց, առանց  
աչքերը Օրիորդէն Մարկոսին դարձնելու . — Բան չկայ  
վարպետ, քու սիկարիդ մուխն է ըսաւ և շարունակեց ար-  
դուկելու, կամ լաւ ևս է ըսել, այրելու գործը, Օրիորդը

մեկնեցաւ . դերձակը՝ դժգոհ դիտելու գեղեցիկ առարկան կորսնցնելէն դարձաւ Մարկոսին քով և ինչ տեսնես , ամբողջ հանդերձը այրած , արեթ եղած էր . այս է հինգ տարուան մէջ սորված վարպետութիւնդ , ըսաւ բարկութեամբ , բայց վարպետ , այս հինգ տարուան մէջ ես մէկ անգամ ալ արդուկ ըրած չեմ , հապա ի՞նչ ըրիր . — ամէն օր վարպետիս կնոջ հրամանները կը կատարէի իր տան մէջ . հիմա հասկցայ , Մարկոս , հանէ հանէ հանդերձներնդ այս արդուկած հանդերձդ հագիր տեսնենք այրածը շա՞տ է , Մարկոս վարպետին ըսածին պէս կընէ , գնա կորի՛ր , աչքիս մ'երևնար անգամ մ'ալ , Կս քեզիպէսներուն պէտք չունիմ , որովհետև ամուրի եմ . . . ըսելով խանութէն դուրս վռնտեց :

Վարպետներ ձեր աշակերտները ձեր տղաքներուն պէս դորձածեցէք :

Աշակերտներ , ձեր վարպետներուն հաւատարիմ եղէք և ժամ առաջ սորվելու աշխատեցէք ձեր վարպետին արհեստը :

## ՄԻՆԱՐԷԻ ԶԱԼԱՆ ԳԸԼՇՅԸՆԸ ՀԱԶՐԸԼԱՐ

(Տաճկ . սասծ)

ԴԱՏԱԻՈՐ . — Պարոն Տանձիկ , այս մարդիկ կը վկայեն թէ դուն Ծխախոտին կինը կը սիրէս , ճի՞շդ է .

ՏԱՆԶԻԿ . — Շատ ճի՞շդ կը վկայեն .

ԴԱՏ . — Դուք ի՞նչ իրաւունքով ուրիշին կինը կը սիրէք , ես օրէնքով ձեզ կը պատժեմ , գիտէ՞ք .

ՏԱՆԶԻԿ . — Ո՞ր օրէնքով կը պատժէք .

ԴԱՏ . — Այս երկրին ու այս ատենի օրէնքով .

**ՏԱՆՁԻԿ.**— Չարաչար կը սխալիք, Տէր դատաւոր, որովհետեւ ես այս երկրին օրէնքով չէ որ կը սիրեմ այս կի- նը այլ...

**ԴԱՏ.**— Շարունակէ, տեսնենք թէ ի՞նչ օրէնքով կը սիրէք այս կինը:

**ՏԱՆՁԻԿ.**— Կը սիրեմ ու կը պաշտեմ այս գեղանի կինը մեր Սուրբ Աւետարանին ու Աստուծոյ բանին համեմատ:

**ԴԱՏ.**— Ի՞նչպէս:

**ՏԱՆՁԻԿ.**— Չէ՞ որ Աւետարանը կըսէ, Առաքեալին բեր- նով, «Սիրեցէք զմիմեանս, քանզի Աստուած սէր է», ու- լեմն այս կինը սիրելովս ես Աստուած սիրած կըլլամ, մի- թէ օրէնքը կարգիլէ մէկը որ իր սրտովն ու հոգիովը իր Աստուածը սիրէ:

**ԴԱՏ.**— (Գլուխը դարձնելով ու ժպտելով) մինարէյի չալան գըլըֆընը հազըրլար) ըսած է:

\* \*

**ՍՈՒՐԷՆ.**— (Իր մամային) Ո՛ւր կերթաս մամա.

**ՄԱՄԱՆ.**— Եկեղեցի կերթամ տղաս.

**ՍՈՒՐԷՆ.**— Եկեղեցին ի՞նչ կայ, որ ամէն կիրակի հոն կը վազես.

**ՄԱՄԱՆ.**— Ամէն անոյշ խօսքեր ու անոյշ բաներ կան տղաս.

**ՍՈՒՐԷՆ.**— Ինծի ի՞նչ կը բերես ուրեմն.

**ՄԱՄԱՆ.**— Շնորհք ու շաքար տղաս.

**ՍՈՒՐԷՆ.**— Մամա քեզի բան մը ըսեմ չնորհքը քեզի և պատուելիին պահէ, իսկ շաքարը ինծի բեր:

\* \*

**ՎԱՐԺԱՊԵՏ.**— Ծօ քրմապետ, ինծի կրնա՞ս ըսել թէ Աստուած Ադամն ու Եւան դրախտէն ինչո՞ւ վռնտեց.

**ԱՇԱԿԵՐՏ.**— Այո վարժապետ, որովհետեւ կերան, խը- մեցին, սիրուեցան ու սիրեցին, և պարտէզին քերան չը վճարեցին:

ՅՈՎՀ. Յ. ՄԱՄԱՍԵԱՆ

## ԼԱՆՅԵԼՈՒԹՅՆԵՐ

---

Դպրոց մը կայ պիտի ճանչնաք տասներկու սենեակով ,  
Ամէն մէկ սենեակ երեք հարիւր աշակերտ ունի , հինգա-  
կան վարժապետներով .

Այս դպրոցը տեսուչ մը ունի գիշեր ու ցորեկ կաշխատէ ,  
Չէ՛ ըստի կը նայի կանցնի կը մտածէ անհոգ չէ՛ .

Տեսուչէն շատ ճարպիկ տեսայ մէկ չ՛լատ այ կառավարիչի ,  
Այսպէս աշխատողներու համար չէ՞ գրէ բանաստեղծ գը-  
րիչը .

Քարով հողով չէ տեսնուէ դպրոց մը շինուի այս տեսակ  
Բոլոր թագաւորներ ունի մըսթըր Ուիլսըն՝ չունի մինակ .  
ՏԱՏԷՐ կըսէ , շուտ կը գտնուի պատճառը պարզ գրեցի .  
Անշուշտ շատ մարդ պիտի ուտէ այսպիսի կակուղ հացի :

---

Ամառ և ձմեռի մէջ տեղի ծաղիկ մը կըլլայ  
Ո՛վ է մէկ մարդ առանձին չըլլայ .  
Կըսէք բարեկամներ հիմա այս ի՞նչ է  
Շուտով գտնելու էք դժուար բան մը չէ :

---

Ծառ մը կայ , ճիւղ կունենայ՝ կանաչեղէն չունի ,  
Հողը տնկես կանհետի , ինչպէ՞ս կը մեծնի :  
Բարեկամներ մարդ ըսելով գրէք նէ , էջեր  
Վերջը կը գարմանաք մարդ չէր թէ ինչ էր :

---

## ԴԺԲԱՂԴ ՊԱՆԴՈՒԽՏԸ

---

Հայրենիքէս հեռու մինակ,  
Կեանք կը վարեմ անտանելի,  
Կարօտօք ծնողքիս անուշակ,  
Կեանքըս սիրտըս միշտ կը մաշուի:

Երբ կը յիշեմ սարսուր կազդէ,  
Այս կեանքը ինձի համար,  
Պալատը սև մութ բանտ է,  
Քանի տանջուիմ ես չարաչար:

Ով, սոխակներ հայրենիքիս,  
Զմայլեցնող ձեր ձայներով,  
Սփոփանք էք խեղճ ծնողքիս,  
Անուշիկ յուզիչ երգերով:

Մարախլապատ ամպերը սև,  
Դիզուած կենան գլխու վերև,  
Օտար երկիր կարօտ քաշեմ,  
Մինչև ծագի մի նոր արև:

Բաղդս սև է յոյսս կտրուկ,  
Կեանքս կանցնեմ վշտօք քցալօք,  
Ըսէք ինձի սիրելիներ,  
Պիտի գրկե՞մ ծնողքս արդեօք:}]

Յ. Մ.

Նախ եւ ասայ աղէկ կշտ վերջ գործե  
Մի զղյանար սխալներդ երեսան եղե  
Տխմար այն է միշտ տայտ է սորված  
Ով գիտե րէ ով վաստկի ով ուտե:

Երկու տխմար մարդիկ ծառի մը ներքեւը նստած պա-  
հուն, անդիէն սոխակ ծառին վրայ թռչտելով կը դայլայ-  
լէ, այս երկու ընկերներ այս դայլայլու մի հետաքրքրուած  
մէկզմէկու հետ կսկսին կռուելու թէ այս սոխակը ինծի  
համար, ոչ ինծի համար դայլայլեց ըսելով, այս կռիւը եր-  
կու երեք ժամ կը շարունակէ, վերջապէս կը հաւանին թէ  
երթան եղելու թիւնը գիւղատիրոջ պատմեն և լուծեն ի-  
րենց վիճարանու թիւնը:

Կերթան կը գտնեն գիւղապետը և կը պատմեն, ոչ  
գիւղապետը ոչ քեզի և ոչ ալ միւսին համար այլ ինծի հա-  
մար դայլայլեց պատասխանելով կառաջարկէ անոնց որ մէ-  
կուն փոքր սնտուկ մեղր բերեն իրեն: Ահա երկու ընկեր-  
ներ իրաւասու ըլլալով կը հաւանին և կը կատարեն իրենց  
նուիրատուութիւնը:

---

Խնդրը դրամագրոյն մըն է մեծ,  
Այսպէս պիտի խօսի որոնք որ շսեմ,  
Նուազ խնդրը այքի ցուսեմ ալ է գեշ,  
Խնդրը ևւ տխմար այսպէսով պատմեմ:

Չմեռ է, ամէն տեղ ճերմակ սաւան փռուած, ծա-  
ռերը սպիտակ ծաղիկներով գեղազարդ, բուքը կը փչէ,  
այս ժամանակի պաղէն և ցուրտէն պատասպարուելու նպա-  
տակաւ, նախարարներէն մէկը կը հագնի իր երկայն վե-

րարկուն և դէպի արքունիք ճամբայ կելլէ, ճամբան կամացուկ մէկը ասոր մօտենալով անոր վերարկուին մէկ մասը կը կտրէ կանցնի, նախարարը վերահասու չըլլար այս եղելութեան և կը շարունակէ իր ճամբան: Արքունիք կը հասնի, միւս ընկերները ականատես կ'ըլլան վերարկուին գլուխը եկածին, նախարարը կը շուարի և մտահոգութեամբ կը ստիպուի տուն երթալ և փոխել. Եանքէսին երբոր կը տեսնայ նախարարին ուրիշ մը հագնիլը, տուն կ'երթայ կը ներկայանայ նախարարին տիկնոջ և կը պահանջէ վերարկուն կտորը ցուցնելով. Տիկին, էֆէնտին գողը գտաւ ահա այս է վերարկուն կտորը ըսելով, կը պահանջէ դայն. տխմար և անխելք տիկինը կ'անսայ և կը հաւատայ անոր շինծու խօսքերուն և կը յանձնէ վերարկուն, մարգը երբոր կ'առնէ վերարկուն ուրախութեամբ և ցնծութեամբ կը բաժնուի տունէն:

Իրիկուն կ'ըլլայ երբոր նախարարը տուն կուգայ Տիկինը կը պատմէ ինչ որ անցաւ ցերեկ. նախարարը և չասկընայ եղելութիւնը. տիկնոջ դառնալով պէ դուն ալ ինչպիսի տիկին ես. ընկերիս գլխուն եկածը գիտես, գործէն վաճառելով ինչպիսի թշուառութեան և մտահոգութեան մասնուիլը լաւ կը ճանչնաս, անցեալ շաբաթ օր մը իր տիկինը անոր երեսը տխուր տեսնելով իր մարգարտեայ մանեակին մէկը կուտայ որ խարճէ, էֆէնտին կ'առնէ մանեակը շուկայ իջնելու ժամանակ գրպանէն կը գողցնէ զայն. գողը մանեակը առած տուն կը դառնայ տիկնոջ կանչելով միւսն ալ կը պահանջէ առարկելով որ էֆէնտին կ'ուզէ. իսկ Տիկինը ճարպիկ և գիտուն ըլլալով այսօր պազարի ժամանակը անցած է. տուր դայն ինծի վաղը թող ըլլայ կրսէ և մանեակը ձեռքէն կառնէ և գողը տխուր կերպով ճամբայ կը դնէ:

Տեսար քու և անոր միջի եղած տարբերութիւնը վերարկուին. երթալուն չեմ ցաւիր, այլ կը ցաւիմ քու

տխմար վարմունքիդ վրայ, որ օրէ օր ցաւ կը պատճառ ես  
ինձի, ըսած է :

Ով գիտենոյ շատ կը խմես,  
Խեղդող գրգռող միշտ չի մնար,  
Բամբիւ մ'առնես այս առակես, .  
Մարդկութեանդ անխախտ մնար:

Երեք ընկերք կը դիմեն Էսրարճիի մը, հանելով անոնցմէ մին իր գրպանէն ստակը երկնցնելով մարդուն, կուզէ անկից Էսրար գնել, առաջարկելով որ թէ Էսրարը չ'ըսէ ստակը ետ պիտի պահանջեն, Էսրարճին կ'ընդունի այս առաջարկը ստակի փոխարէն անոնց Էսրարէն տալով ճամբոյ կը դնէ : Ահա Էսրար ծխողներ առանց ժամտնակ կորսնցնելու կը լեցնեն կլկլակը և կսկսին խմել, անոնցմէ երկուքը կ'արբենան և իրենց եղած տեղերը կիշնան խորքնոյ մէջ ընկղմելով : Իսկ միւսը կը վազէ մօտակայ բաղնիք մը լուացուելու պատրուակով, կը մերկանայ, և մէկէն ի մէկ խեղագար, կը վազէ Էսրարճիին է՛յ Էսրարճի, Էսրարդ աղէկ չէ եղեր բնաւ ազդեցութիւն մը չունեցաւ ստակս ես աուր ըսելով կը պոռայ, այս ճայնէն կուգան դրացի խանութպաններ Էսրարճիին. — տեսէք ո՛վ դրացիներ և վրկայ եղէք տրուած Էսրարը իրր թէ ազդեցութիւն մը չէ ունեցեր բռնած է թէ չէ բռնած ըսելով կը ցուցնէ անոր մերկութիւնը . իսկ միւս երկու ընկերներուն գալով անոնք որ խորքնոյ մէջ ընկղմած էին, անոնցմէ մին միւսին պէ աղբար գլուխս արեան մէջ թաթախուեցաւ ինչ է այս քու ըրածդ կը ճնչէ . ծօ ինչ ընեմ քեզի ես իմ գլուխս է որ կը քերծմ պէ ճանքմ այս իմ գլուխս է . իսկ միւսը հա-

պա իմ գլուխս ուր է պատասխանելովը ամբողջ հանդի-  
սակաւները ծիծաղած են :

---

Բարի մարդիկ ողից գործեն,  
Պատմորիներս շատ յարմար  
Անմեղ մարդը կախադակեն,  
Ազատուած անոր համար :

Օր մը Փէհլուէ Տանէն ոճիրի մը համար անիրաւ տեղ  
կախուելու կը դատապարտուի, ու կախուելու տարուած  
ատենը բուն ոճրագործին խիղճը արթնցած բազմութեան  
մէջէն ձայնը վերցնելով կը պոռայ «այդ մարդը ձգեցէք  
անոր տեղ զիս կախեցէք» : Իսկոյն այս մարդուն խօսքերը  
նկատողութեան առնուելով Փէհլուէ Տանէն և այս անծա-  
նօթ պոռացողը երկրորդ անգամ քննութեան ատեանը կը  
քաշեն : Հիմա խնդիրը կ'ստուգուի որ սպաննուողը գինով-  
ցած մըն է եղեր և այս անծանօթ մարդուն պատուոյն  
դպչիլ համարձակեր է, մարդն ալ իր պատիւը պաշտպա-  
նած ըլլալու համար գինովը սպաննել է : Ասոր վրայ Փէհ-  
լուէ Տանիին վճիռը ետ կ'առնուի և իրեն կը հարցուի բուն  
իմաստը իր մէկ խօսքին «փորձել» զոր միայն առջի ատ-  
եանին մէջ արտասանած էր : Ասոր վրայ Փէհլուէ Տանէ  
խօսք առնելով կըսէ «ճամբուն վրայ յիշեալ սպաննուող  
մարդուն հանդիպեցայ և անոր կուրծքին վրայ մխրճուած  
դանակը հանելով ձեռքս առի փորձելու համար թէ Աստ-  
ուած արդեօք անմեղ մարդ մը կը դատապարտէ :

Շատ մարդ կայ խեղճ վիճակի մէջ,  
Սեղք ունի մտածում չ'ունի .  
Հիմա գրեմ մեկ երկուս էջ,  
Այս աշխարհը ինչէ՞ր ունի:

Հարուստ մարդ մը իր դաւակին գիտութիւն սորվեցը-  
նելու համար զայն մի քանի գիտնականներու կը յանձնէ :  
Ատեն մը վերջ տղան խելօք բայց անխոհեմ վկայականով  
իր տունը կը վերադառնայ . հայրը այս վկայականին ճշդու-  
թիւնը հաստատելու համար փոխին մէջ մատնի մը առնե-  
լով տղուն կը հարցնէ թէ իր փոխին մէջ եղածը ինչ է :—  
Տղան ըէմպըլ նետելով կ'ըր բան մըն է կըսէ . հայրը շատ  
աղէկ կ'ըր բանը ինչ կրնայ ըլլալ կը հարցնէ . Տղան , հայ-  
րիկ , աղօրիքի քար մը կրնայ ըլլալ կը պատասխանէ : Տը-  
ղուն անխոհեմութիւնը ստուգուած է իր այս վերջին պա-  
տասխանով : Տղան չէ կրցած խորհիլ թէ աղօրիքի քարը  
փոխ մէջ կրնայ սեղմել :

---

Սուք մայ խօսիմ քեզի նայե,  
Բարեկամըս խելքի մօտ .  
Շուն քէ ստակ շահե,  
Գողորթներ շատ ամօր:

Առատաձեռն մարդ մը նաւակով ծովը պտտելէն վերջ  
ծովեզր կուգայ ու ցամաք ելնել կուզէ , նաւակին չուանը  
ծովեզր կեցող երևոյթով մեծանձն մարդու մը կը նետէ  
որ բռնէ : Առատաձեռնը մարդուն այս ծառայութեան հա-  
մար հինգ ոսկի հանելով կ'ընծայէ խորհելով թէ ինք ար-

դէն դրամի կարօտ չէ և իր նուէրը չ'ընդունիր: Մարդը  
դրամը կ'առնէ և գրսպանը կը նետէ վերջը գոյն աղքատ-  
ներուն բաժնելու նպատակաւ: Ասոր վրայ առատաձեռնը  
արտոնջալով ես ձեզ մեծանձն մը կարծեցի, մինչդեռ ծո-  
վեզը պտտող և չուան քաշելով դրամ վաստկող սինլքօր  
մըն էք եղեր կըսէ: Մարդը, իրաւ է թէ ես մեծանձն  
մարդ մըն եմ, բայց ձեր իմ մեծանձն մէկը ըլլալս գիտ-  
նալով չուան նետելը մարդ չըլլալդ ապացուցանելուն և  
իմ հօրս ալ խրատը յիշելուս «չուն քչէ դրամ վաստկէ»-  
ոսկիներդ առի ու գրպանս գետեղեցի կը պատասխանէ:

ԱՐՄԵՆԱԿ ԱՐԸԳԵԱՆ



ՏՆՏԵՐ

When I from school came home,  
I thought I would write a poem.  
I said to myself I will, I will say  
Something about cleaning up day.

Do you know that many people die  
On account of a little fly?  
It carried disease from place to place  
And allways on summer days.

Lots of times I see little flies;  
They go on people's pies.  
If you don't keep clean and neat  
They will also get on your meat.

If everybody knew about flies,  
There wouldn't be so many that dies.  
To each other you ought to say—  
Let us keep clean each day.

Some people think this is not so;  
Some people don't even know  
That many, many people die  
On account of a little fly.

If everybody thought like some  
people do.  
Troy would be very clean too.  
Any way I hope Troy is just as clean  
As any other city in New York state.

(Miss) NAOMA A. AREKIAN

Թրոյ քաղաքի մաքրագործութեան շարժումին մէջ,  
բոլոր քաղաքացիներու կողմէ, հետաքրքրած էր նաև գըպ-  
րոցի աշակերտները: Այս առիթւ 9 տարեկան դուստրու  
Նոյէմի Ա. Արըգեան վերի բանաստեղծութիւնը գրած էր,  
տեղական թերթերուն, որը կապացուցանէ մեր յառաջա-  
բանին մէջ յիշած «Ալըգըն օղլու ալըգ օլուր» իօսքը:

Ծանօթ. ՀԵՂԻՆԱԿԻՆ





# ՎՐԻՊԱԿ

| Երես | Տող | սխալ            | Ուղիղ            |
|------|-----|-----------------|------------------|
| 15   | 20  | քէնտիսինտէ      | քէնտիսիտէ        |
| 22   | 21  | եեզ սէքսէն      | եիւզ սէքսէն      |
| 22   | 23  | ճիմինտէ         | ճէմինտէ          |
| 22   | 24  | դիմինտէ         | դէմինտէ          |
| 23   | 7   | մէվչուէն        | մէվզուէն         |
| 23   | 8   | Թաքսիլաթլէ      | Թաֆսիլաթլէ       |
| 23   | 8   | իզահաք          | իզահաթ           |
| 23   | 10  | մարդի           | մատդէ            |
| 24   | 9   | եիւշլէ          | եիւզլէ           |
| 30   | 7   | աֆվ             | աֆ               |
| 30   | 14  | չէշմէն          | չէշմին           |
| 32   | 3   | վալիտէնինի      | վալիտէսինի       |
| 33   | 6   | եիւշ            | եիւզտէ           |
| 33   | 7   | ճանան           | ճանա             |
| 46   | 2   | էհլիտէր         | էհլիտիր          |
| 48   | 26  | օն եէտինճի      | օն պիրինճի       |
| 70   | 2   | հեռացաւ         | հեռացաւ          |
| 71   | 4   | ադիկնեբէն       | ձադիկնեբէն       |
| 71   | 30  | յանձնեցէք       | յանձնեցէք        |
| 74   |     | շ'արժէր         | շ'արժեր          |
| 82   |     | անվէեր          | անվեհեր          |
| 88   | 9   | մա'ր. քիչ ատենէ | մա'ր. քիչ ատենէն |
| 88   | 24  | անօգութ         | անգութ           |
| 89   | 5   | փաշան           | փալան            |
| 90   | 3   | ձեծու տեղ       | ձեծ ուտող        |
| 91   | 19  | Մէւճուեան       | Մուճուեան        |
| 94   | 94  | ստեղծագործելու  | ստեղծագործելու   |
| 95   | 6   | մուզայդ         | մուսայդ          |
| 95   | 6   | կեթառն          | կիթառն           |
| 95   | 18  | վասն փրկչէն     | վասն փրկչին      |
| 95   | 25  | Փոքր Հայաստանի  | Փոքր Հայաստանցի  |
| 96   | 17  | կը քալեն        | կը քաշեն         |
| 103  | 18  | շատ             | շուտ             |
| 104  | 10  | մադէ            | մադէ             |
| 104  | 14  | յար գտնուի :    | ճար գտնուի :     |
| 104  | 18  | դուռ դրացի      | դուռ դրացի       |
| 104  | 28  | Ժպտին           | ձպտին            |
| 116  | 24  | մանկարդ         | մանկամարդ        |
| 120  | 6   | սարսուր         | սարսուռ          |
| 122  | 7   | եանքէսին        | եանքէսին         |

Գ Ի Ն Ն Է 50 Ս Է Ն Թ


## ՎՐԻՊԱԿ

---

| երևս | սոյ | սխալ         | ուղիղ       |
|------|-----|--------------|-------------|
| 10   | 16  | սարյօր       | սարըեօր     |
| 10   | 17  | քէնտիսինէ    | կէնտիսինէ   |
| 10   | 23  | լէյլէ        | էլէյլէ      |
| 12   | 6   | սուտումիւնէն | սուտումէնտէ |
| 14   | 10  | աչաճա        | աչաճագ      |
| 14   | 15  | ագրանըն      | ագրանըն արա |
| 16   | 2   | պոտ          | պուտա       |
| 23   | 6   | նեաս         | նեսա        |
| 23   | 10  | տօլունուր    | պուլունըր   |
| 25   | 25  | պի           | պին         |
| 34   | 2   | պաս          | պազ         |
| 36   | 21  | մա           | մալ         |
| 47   | 3   | եթմիշ        | էթմեգ       |
| 60   | 14  | կէչմիսի      | կէչմիշի     |
| 61   | 8   | աղը          | պաղը        |
| 61   | 10  | ս—           | եարա        |
| 61   | 18  | եեթիբիբ      | պիթիբիբ     |

---





1857 1/2 Jan Card 7196

1857 1/2

More Cleaners





PAMPHLET BINDER  
Syracuse, N. Y.  
Stockton, Calif.

U.C. BERKELEY LIBRARIES



C006097282



